

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (19 Ապրիլ 1992 թ.)

**«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:**

**«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:**

**Սիրելի հաւատացեալ ժողովուրդ Մեր,**

**Սուրբ Աւետարանի այս վկայութիւնը հանդիսանում է հիմքը մեր քրիստոնէական հաւատքի և իր մէջ խտացնում՝ մեր հոգևոր կեանքի բոլոր ճշմարտութիւնները:**

**Այսպէս է, որ այն կոչւում է «մեծ և աքանչելի աւետիս»: Սուրբ Պօղոս առաքեալը իրաւացի է, երբ հաստատում է՝ «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր, ընդունայն են և հաւատք ձեր» (Ա. Կորնթ. ԺԵ. 14):**

**Յիսուսի երկրային կեանքը, իր վերջին երեք տարիներին, զարգանում է կեանքի ու մահուան մեծ խորհրդի հորիզոնի վրայ, անցնելով բազում հրաշալի դէպքերի ճանապարհով, մինչև նրա չարչարանաց օրերը, մինչև նրա մահը խաչափայտի վրայ և թաղումը, հասնելու համար ապա անիմանալի խորհրդի լրման՝ նրա Յարութեան:**

**Մենք, քրիստոնեաներս, մանաւանդ Աւագ Շաբաթուայ ընթացքում, խոր յուզումով ենք ապրում Աստուածորդու տառապանքի պահերը, ապրում ենք Գողգոթայի ճանապարհը, ապրում ենք նրա տանջալի ժամերը խաչափայտի վրայ, նրա հոգևարքն ու մահը, վշտահար սրտով ողբում նրա սուրբ մարմնի թաղումը գերեզմանի հողի մէջ և, ո՞վ հրաշք աշխարհասասան, իղձերը կանանց նման խունկ բերելով նրա գերեզմանին, մեր հոգու աչքերով տեսնում ենք Յիսուսի գերեզմանը՝ դատարկ:**

**Ահա երկու հազար տարիներ շարունակ, քրիստոնեայ մարդկութիւնը, կանգնած Յիսուսի դատարկ գերեզմանի առաջ, կեանքի ու մահուան սահ-**

մանների վրայ, բարձրաղաղակ վկայում է, թէ՝ «Յիսուս մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Այսօր էլ մեզանից ամէն մէկը կանգնած նոյն «դատարկ գերեզմանի» առաջ, խորհրդածում է մեր մարդկային ճակատագրի վրայ, որովհետեւ, ուշ թէ շուտ, նոյն ճանապարհով պիտի գնանք, ինչպէս Յիսուս, երբ հնչի մեր ժամը, համաձայն բնութեան աստուածադիր օրէնքի: Ի՞նչ պիտի պատահի մեզ՝ գերեզմանից այն կողմ: Արդեօք Յիսուսով պիտի մեռնե՞նք միայն, թէ նաև Յիսուսով պիտի գնանք դէպի ափը յաւերժական կեանքի:

Քրիստոնեայ լինել՝ նշանակում է ապրել ու գործել Յիսուսի կեանքի ճանապարհով, անցնել յաճախ տառապանքների ու չարչարանքների ուղիով, բարձրանալ խաչափայտի վրայ ու մահանալ և գերեզման իջնել, անմար յոյսով, որ մահով մահուան ենք յաղթելու և անցնելու ենք սահմանը՝ կեանքից դէպի կեանք, դէպի աշխարհը յաւերժական լոյսի ու խաղաղութեան:

Թէ՛ անհատապէս և թէ՛ ազգովին, մանաւանդ մեր տագնապալի այս օրերին, մեր ժողովրդի կեանքը ի Հայաստան և յԱրցախ մի տևական հերոսական պայքար է ընդդէմ մահուան ու չարիքի: Համակուած Յիսուսի յարութեան խորհրդով, մահուան յաղթելու յոյսը, մեր ողջ ժողովրդի համար դառնում է պայծառ ստուգութիւն և հզօրիչ անկոտրում ուժ:

Յիշենք մեծախորհուրդ բացայայտումը Սուրբ Յովհաննէս աւետարանչի. «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» (Յովհ. ԺԲ. 24), որից ներշնչուած Պօղոս առաքեալը, իր խօսքն ուղղելով թերահաւատներին, ասում է. «Դու զոր սերմանեսն, ո՛չ կենդանանայ եթէ ոչ մեռանիցի» (Ա. Կորնթ. ԺԵ. 37—38): Այսպէս է, որ «մահը կոլ է գնում յաղթութեան» (Ա. Կորնթ. ԺԵ. 55): Այս կերպ ըմբռնելով կեանքի ու մահուան խորհուրդը, քրիստոնեան իր հաւատքի զօրութեամբ դառնում է անձնուրաց պաշտպանը կեանքի յաղթանակի և անպարտելի մարտնչողը ամէն ինչի դէմ, որ տանում է դէպի մահ:

Յիսուսի յարութեան անիմանալի խորհուրդը, հանդիսանում է կեանքի մշտանորոգ ուժերի անսպառ աղբիւրը: Մահը ստանում է նոր իմաստ, մարդկային իմաստ, զի Յիսուս իր մահով է, որ յաղթեց մահուան ու աշխարհին:

«Մահ կամ ազատութիւն» մարտակոչով, անկախութեան եռագոյն դրօշը իր ձեռքին, հայ ժողովուրդը այս օրերին աստեղային մի թռիչք է կատարում դէպի ազատութիւն, մի այլ աշխարհի տեսիլքով, մի աշխարհի, ուր մահը պարտուում է ազատութեամբ:

Մեր ազգը թէ՛ Հայաստանում, թէ՛ Արցախում մարտնչում է, այո՛, յանուն կեանքի յաղթութեան: Այսպէս է, որ հինաւուրց հայ ազգը մի անգամ ևս պատմութեան բեմի վրայ հանդէս է գալիս հպարտ ճակատով, որպէս վաւերական քրիստոնեայ ժողովուրդ:

Բոլոր նրանք, ովքեր քրիստոնէութիւնը համարում են տկարների կրօն, պարզապէս չգիտեն, թէ ինչ է նշանակում քրիստոնեայ լինել: Ոչ մի այլ դաւանանք կամ գաղափարախօսութիւն, չունի տեսիլքը կեանքի բացարձակ յաղթութեան, ինչքան քրիստոնէութիւնը: Ոչ մի այլ դաւանանք կամ գաղափարախօսութիւն չի կարող հասնել Պօղոս առաքեալի հոգևոր գաղափարական բարձունքին՝ ասելու համար— «զի ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել շահ» (Փիլիպ. Ա. 21):

Արդ, հաւատացեալ հայեր, համախմբուած մեր ազգային Եկեղեցու, Հայ Առաքելական Եկեղեցու հովանու ներքոյ, իբրև հաւատարիմ զինուորները մեր անկախ ազգային պետութեան, մէկ սիրտ, մէկ հոգի, ժայռացած կամքով, այս զատկական օրհնեալ պահին, մեր Փրկչի՝ Քրիստոսի յարութեան մեծ աւետիսով ոգեշնչուած՝ «առէք զսպառազինութիւն Աստուծոյ զի կարող լինիցիք ի դիմի հարկանիլ չարին յաւուրն չարութեան: Եւ իբրև զամենայն ինչ կատարիցիք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ և զգեցեալ զզրահս արդարութեան» (Եփես. Զ. 13—14):

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ, ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ»: Ամէն: